ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/88

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 հունիսի 2023 թ. N 88

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ.հունիսի 8-ին քննարկեց «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՀ ՊԿԱ, բուհ, Ակադեմիա) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	28 ապրիլի 2022 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	16 նոյեմբերի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	09-12 հունվարի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	11 ապրիլի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	03 մայիսի 2023թ.

Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ», գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ Ակադեմիայի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Ակադեմիայի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Նախորդ հավատարմագրումից հետո ակադեմիայում վերանայվել են կրթական ծրագրերը՝ նորովի մշակված քաղաքականության, կարգերի ու ընթացակարգերին համապատասխան: ՄԿԾ-ներն ավելի համահունչ են առաքելությանը, կրթական վերջնարդյունքները համապատասխանեցվել են ՈԱՇ-ի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջներին:

Ակադեմիայում, կարևորելով աշխատաշուկայում տեղի ունեցող անընդհատ փոփոխությունները և շուկայի առաջադրած նոր պայմանները, որոշակի վերլուծությունների հիման վրա փակվել են որոշ կրթական ծրագրեր, իսկ 2022-2023 ուստարվանից մեկնարկվել է պահանջարկ վայելող «Գործնական հոգեբանություն» կրթական ծրագիրը:

Ակադեմիայում կիրառվում են դասավանդման և ուսումնառության, գնահատման բազմազան մեթոդներ, պարբերաբար իրականացվում են ծրագրերի մշտադիտարկումներ ու դրանց արդյունքների քննարկումներ:

Ակադեմիան ՄԿԾ-ների իրականացման համար ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, հրավիրում է նաև հանրային ոլորտի պրակտիկ աշխատանքի փորձ ունեցող արհեստավարժ մասնագետներ, ինչն ապահովում է մասնագիտական վերջնարդյունքների ձեռքբերումը: Գործում է ՊԴ և ՈւՕ կազմի ընտրության, ՊԴ կազմի գնահատման, մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն, սահմանված են համապատասխան ընթացակարգեր: Առկա են ՊԴ կազմի կայունության ապահովման մեխանիզմներ և իրականացվում են կարիքներին համապատասխան

Հաստատության ռեսուրսային բազան հիմնականում ապահովում է սահմանված առաքելության, նպատակների և ՄԿԾ-ների իրականացումը: Բուհի կրթական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները բավարար են: Ակադեմիան հետևում է ռեսուրսներից ներքին շահակիցների ռեսուրսներից բավարարվածությանը և պարբերաբար բարելավում է դրանք:
Ակադեմիայի բյուջեն հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, ինչը կայունության տեսակետից կարող է խնդիրներ առաջացնել:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Նախորդ հավատարմագրումից հետո ՀՀ ՊԿԱ-ն բարելավումներ է կատարել կառավարման համակարգում: Այժմ ակադեմիան ունի կառավարման օպտիմալացված համակարգ, արդյունավետ գործառույթ ունեցող վարչական կառույցներ, ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական բավարար ռեսուրսներ:
Ակադեմիան մշակել է գործունեության գնահատման առանցքային ցուցիչներ: Ներքին ու արտաքին շահակիցների հետ իրականացվող հետադարձ կապի միջոցառումներից ստացված տվյալները կիրառվում են հետագա ռազմավարական պլանավորման գործընթացներում:
Որակի ներքին ապահովման համակարգի դերը բուհի գործունեության բարելավման համատքեստում նկատելի է: Ներքին որակի ապահովման գործընթացների համար բուհը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ:
ՀՀ ՊԿԱ-ի որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ դեռևս առկա չէ միասնական պատկերացում, բազմազանեցված չեն տվյալների հավաքագրման մեխանիզմները, որակի մշակույթը դեռևս զարգացման փուլում է: Առկա չեն մեխանիզմներ Ակադեմիայի լավ փորձի բացահայտման ու տարածման ուղղությամբ, գնահատված գործընթացների արդյունքում ոչ միշտ են բարելավումները հստակեցված և ամրագրված:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

Ակադեմիայում գործում են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, որոնք ապահովվում են իրազեկվածության բարձր մակարդակ ուսանողների շրջանում: Սերտ է համագործակցությունը պետական և մասնավոր հաստատությունների հետ, ինչը հնարավորություն է ստեղծում ուսանողների ավելի հաճախակի և երկար պրակտիկաների անցկացման: Ակադեմիայում Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության առկայությունը նպաստում է ուսանողների կարքիների բացահայտմանը, ինչպես նաև ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել լրացուցիչ մասնագիտական դասընթացների և ստանալ համապատասխան խորհրդատվություններ, առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:
ՊԿԱ-ն կարևորում է գիտահետազոտական ուղղության զարգացումը, ունի այդ ուղղությամբ ձևավորված գերակայություններ և նպատակներ:

Չնայած պրոֆեսորադասախոսական կազմի առկա ներուժը, բուհը համակարգված քայլեր չի իրականացրել հետազոտությունների և զարգացման ուղղությամբ: Ակադեմիայի ՊԴ կազմի կողմից հետազոտություններն իրականացվում են հիմնականում դասախոսների նախաձեռնությամբ՝ սեփական հետաքրքրությունների շրջանակում, հիմնականում սեփական ֆինանսավորմամբ, քանի որ բացակայում է դասախոսների խրախուսման, ինչպես նաև ներքին դրամաշնորհների համակարգը: Թերի են հետազոտության և կրթության կապի ապահովման, հետազոտության միջազգայնացման մեխանիզմները: Այս ուղղությամբ բուհի գործունեության բարելավումը խիստ հրատապ է:
Նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել ու կանոնակարգվել են միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքները: Ակադեմիան նպատակաուղղված աշխատանքներ է իրականացրել միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար, գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, առկա է միջազգայնացման գործառույթներ ունեցող արհեստավարժ վարչական անձնակազմ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
   - Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առանցքային ցուցիչների հստակեցմանը՝ ներառելով քանակական և որակական արժեքներ, և տարեկան կտրվածքով վերլուծության իրականացմանը,
   - բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլաններում կամընտրական դասընթացների կրթաբլոկը պարտադիր դարձնելու անհրաժեշտությանը,
   - դասախոսների գնահատման համապարփակ գործիքակազմի կիրառմանը,
   - գիտահետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը,
   - հաշվետվությունների բարելավմանը՝ դարձնելով դրանք առավել վերլուծական,
   - միջազգային կառույցների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման ուղիների մշակմանը,

- դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը,
- որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, Ակադեմիայի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով բուհի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. հունիսի 14
ք.Երևան